

Խ. ԱՐՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ
УЧЕНЫЕ ЗАПИСКИ АРМЯНСКОГО ГОСУДАРСТВЕННОГО
ПЕДАГОГИЧЕСКОГО УНИВЕРСИТЕТА ИМ. Х. АБОВЯНА

Հումանիտար գիտություններ №3-4 (28-29) 2016 Гуманитарные науки

ՀՏԴ 373. 013

ՆԱԽԱԳԾԵՐԻ ՄԵԹՈԴԸ ՈՐՊԵՍ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԼԱՎԱՐԿՎԱԾ
ԱՐԴՑՈՒՆՔԻ ՍՍՏՑՄԱՆ ՄԻՋՈՑ

Ա. Բ. ՄԱՀՐԱՆՅԱՆ, Հ. Վ. ԱՅՎԱԶՅԱՆ

Խ.Արմյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան
0010, Երևան, Տիգրան Մեծի 17
e-mail: sahradyanartak@gmail.com

Նախագծերի մեթոդն ուղղված է աշակերտների ինքնուրույն գործունեության խթանմանը և միտված է գիտության ու տեխնիկայի ոլորտում աշակերտների գիտելիքների տարբեր կարողությունների, միջոցների և հնարքների կիրառմամբ առաջադրված խնդիրների լուծմանը: Հոդվածում ներկայացված է մեթոդի հնարավորությունները որպես կրթական գործընթացում շոշափելի արդյունքի ստացման միջոց: Նշված մեթոդը տարբերվում է դասական մեթոդներից, աշակերտներին ուղղորդելով ինքնուրույն նպատակադրման, հանգեցնում է դրա իրականացման համար անհրաժեշտ տեղեկության ձեռքբերման, վերլուծության և խնդրի լուծման համար անհրաժեշտ տեսական, մեթոդական ու փորձնական գործառնությունների արդյունքում համապատասխան լուծման առաջարկության:

Բանալի բառեր. Ձեռնարկչական գործունեություն, ուսումնառության մոտիվացիա, մանկավարժական տեխնոլոգիաներ, նախագծերի մեթոդ, ճանաչողական հմտություններ, ինքնուրույն նպատակադրում, խնդրի լուծման առաջարկություն:

Ներկայացված է խմբագրություն 11.12.2015թ

Ուսումնական գործընթացի կազմակերպման նկատմամբ բազմամակարդակ մոտեցման այսօրվա պայմաններում ուսումնառության մոտիվացիան բարձրացնելու կարևոր պայմաններից մեկը դասարանում ստացած գիտելիքները գործնականում կիրառելու կարողությունն է: Այսինքն տարբեր մանկավարժական հնարքների միջոցով աշակերտներին մղել ձեռնարկչական գործունեության:

Ձեռնարկչական մանկավարժությունն ունի երկու հիմնական մոտեցում՝ հստակություն և գիտակցվածություն:

Աշխատանքի նպատակն է ավանդական և առաջարկվող մեթոդների համադրման արդյունքում սովորողների ուսումնառության յուրաքանչյուր տարիքային փուլերի համար հետազոտել նախագծերի մեթոդի ազդեցության հնարավորություններն ու ստացված արդյունքները:

Ուսումնառության ավանդական ուսուցման հիմքում դրված է զգացողությունները, հստակությունը և դրանց արտահայտումը բառերով, ինչպես նաև վարժությունները: Ձեռնարկչական մանկավարժության հիմքում ընկած են շարժումը և խնդիրը[1-3]:

Ուսուցիչը ոչ միայն պետք է աշակերտներին հանձնարարի վարժություններ, անցածի կրկնություն, ինչպես նաև պետք է աշակերտներին մղի մտածել նոր մոտեցումների մասին՝ ինչ ինքը դեռևս չգիտի: Ուսումնական գործընթացը պահանջում է,

որ ուսուցիչը սովորեցնի աշակերտներին մտածելու և գտնելու ուսումնական գործընթացում բարձրացված խնդիրների համակարգված լուծում: Ուսումնական խնդիր լուծել նշանակում է ձևափոխություններ անել, ուսումնական նյութի հետ աշխատել ոչ ավանդական մոտեցումներով:

Ուսումնական գործընթացը դինամիկ զարգացում է՝ ժամանակի ընթացքում: Ուսումնական խնդրի ձևակերպումն ուսուցչի հիմնական գործունեության ոլորտն է: Այսօրվա աշակերտները ժամանակակից տեղեկատվական հասարակության սերունդն են: Հետևաբար ուսուցիչները պետք է մանկավարժական մեթոդաբանական տեխնոլոգիաներում ներառեն տեղեկատվական տեխնոլոգիաները, որպեսզի պլանշետներով և հավելվածներով ապրող սերնդին կարողանան ներգրավել ուսումնական գործընթացում [2]: Ստացած գիտելիքներն առավել արդյունավետ կլինեն, եթե կատարվեն ինքնուրույն փորձարկումներ, համակցվեն տարբեր առարկաներից ստացված տարատեսակ հմտությունները: Իսկ ինքնուրույն փորձարկումներն էլ իրենց հերթին իմաստային կլինեն, եթե դրանք համընդհանուր ուսումնասիրման դրվեն, ինչը հնարավորություն կընձեռնի առավել գործնական հմտություններ կուտակել: Ինքնուրույն փորձարկումները նախընտրելի է կատարել ուսուցանվող նյութն ուսումնասիրելուց հետո, սակայն օգտակար կլինի անմիջապես ծանոթանալ առաջադրանքի պահանջներին, որպեսզի ուսումնասիրությունն առավել նպատակային լինի: Շատ կարևոր է նաև վերջնարդյունքները ներկայացնելու կարողությունը:

Մանկավարժական տեխնոլոգիաների ողջ բազմազանությունից այս խնդրի լուծման համար առավել նպատակարար է նախագծերի մեթոդը: Վերջինիս հիմքում ընկած է աշակերտների ճանաչողական հմտությունների զարգացումը, սեփական գիտելիքների ինքնուրույն կառուցվածքայնացումը, տեղեկատվական տիրույթում կողմնորոշվելու կարողությունը, քննադատական մտածողության զարգացումը: Մեթոդը միշտ ուղղված է աշակերտների ինքնուրույն գործունեությանը և ենթադրում է գիտության և տեխնիկայի ոլորտում տարբեր կարողությունների, գիտելիքների, միջոցների և հնարքների կիրառմամբ որևէ խնդրի լուծում: Նախագծերի մեթոդը տարբերվում է ավանդական մեթոդներից նրանով, որ աշակերտներն ինքնուրույն նպատակադրում են անում և սահմանում դրան հասնելու ճանապարհները, իրականացնում են անհրաժեշտ տեղեկատվության որոնում, ընդհանրացում և վերլուծություն: Նախագծի իրականացման ընթացքում ուսուցիչը պետք է հետապնդի մեկ նպատակ, որ յուրաքանչյուր աշակերտ արտահայտի իր վերաբերմունքը և դիրքորոշումը թեմայի նկատմամբ: Երբ դասարանում քննարկվում է «Կոորդինատներ, կոորդինատային համակարգ» թեման, ապա աշակերտներն իրենց նախագծերի համար ինքնուրույն ընտրում են «Որտե՞ղ են կիրառվում կոորդինատները», «Ինչո՞ւ են իրարից տարբերվում «Ադուէս» և «Կրիայ» ծրագրերի կոորդինատային համակարգերը», «Կոորդինատներ. վիրտուալ, իրական» և այլն [4]:

«Երկրաչափական պարզ մարմիններ» թեման ուսումնասիրելիս աշակերտները կարող են իրենց նախագիծն անվանել «Նախագծում ենք մեր խոհանոցը», «Ինչպիսի՞ կահույք պետք է ընտրել որոշակի չափերով սենյակի համար», «Վերանորոգում ենք բնակարանը», «Ինչպե՞ս կառուցել եռաչափ մարմիններ», «Եռաչափ մոդելավորում», «Եռաչափ մոդելավորում. ռոբոտը մեր ձեռքերով» և այլն:

Ընտրելով նախագծի թեման սկսում են աշխատել դրա վրա: Նախագծի ընդհանուր թեմայի վերաբերյալ քննարկումները խթանելու նպատակով ուսուցիչը սահմանում է խնդրի լուծման ուղղվածությունը, կատարում է աշակերտների կողմից հետաքրքիր գաղափարներ առաջադրելուն միտված հարցադրումներ, ուշադրության բևեռացում՝ նախագծի ընդհանուր թեմայի, ենթաթեմաների վրա և, անհրաժեշտության դեպքում, նպաստում է նոր ենթաթեմայի ձևավորմանը: Անհրաժեշտ է աշակերտների հետ

քննարկել նախագծի իրականացման պայմանները՝ կիրառելով դասագրքերում, վարժություններում, և տեքստերում ներկայացված համապատասխան բառապաշարը և տեղեկատվությունը:


Աշակերտների հետ անհատական զրույցներում մշակել ենք իրենց սեփական ուսումնառությունն ըմբռնելու կարողությունը գնահատելու հնարավորություն:

Տեխնոլոգիական նախագիծը կարելի է իրականացնել խմբերով, ինչպես նաև՝ անհատական: Իրականացման ձևից կախված՝ խմբերով թե անհատական, կատարվում է դերաբաշխում, սահմանվում է յուրաքանչյուր աշակերտի գործունեության դաշտը, ինչպես նաև նախապատրաստության ժամկետները՝ հաշվի առնելով երեխայի զարգացման փուլերը՝ կախված նախագծի իրականացման ձևից:

Շատ կարևոր է դասի վարման գործընթացում ուսումնական մեթոդները համադրել այնպես, որ դրանց ամբողջականությունն առավելագույնս ազդի երեխայի երևակայության և զգացմունքների վրա, ստիպի նրան վերապրել ուսումնասիրված նյութը, այսինքն «իր միջով անցկացնի» այն:

Ելնելով անձի զարգացման և ձևավորման առանձնահատկություններից տարբերվում են երեխայի ուսումնառության սկզբունքները, ըստ որի յուրաքանչյուրը յուրովի է վերաբերվում իր սովորելու գործընթացին: Այս տեսանկյունից առաջարկվում է առանձնացնել ուսուցանվողների հետևյալ տիպերը՝ ակտիվիստներ, իրատեսներ, մտածողներ և տեսաբաններ:

Տիպերի միջև գործող կապերը բացահայտել է Դավիթ Կուլբը: Նա սահմանել է ուսուցման առավել տարածված մոդելներից մեկը, որը հիմնված է երկու չափողականության վրա և ունի ուսուցման տարբեր ոճեր(նկ. 1) [1]:



Նկար 1. Երկու չափողականության վրա հիմնված ուսուցման ոճեր

Առանձին հեղինակներ[1,2] եկել են այն եզրակացության, որ տարբեր մարդիկ ունեն ուսումնառության տարբեր ոճեր: Այս կամ այն ոճի նախապատվությունը պայմանավորված է բազմաթիվ ազդակներով, մասնավորապես մարդու զարգացման փուլերով: Աշխատանքում առանձնացրել ենք զարգացման երեք փուլ և հիմնավորել, որ վերը նշված չորս ոճերի հաջող ինտեգրման նկատմամբ մարդու տրամադրվածությունն աճում է մարդու զարգացման փուլերին զուգընթաց և զարգացման էտապները ներառում են՝

1. Ձեռքբերումներ: Ծննդյան օրվանից մինչև պատանեկություն՝ «ճանաչողական կառուցվածքների» և հիմնական կարողությունների զարգացում:
2. Մասնագիտացում: Ուսումնառությունը դադարում, առաջին աշխատանքային փորձը և անձնական փորձը հասուն տարիքում հանգեցնում են որոշակի արտադրողականության: «Կրթության մասնագիտացված ոճ»՝ «սոցիալական,

կրթական և կազմակերպչական սոցիալիզացիայի» արդյունքում:

3. Ինտեգրում: Աշխատանքային գործունեության պահից մինչև վերջ՝ անձնական կյանքում և աշխատանքում ոչ գերիշխող ուսումնական ոճի դրսևորում:

Իհարկե պետք է նշել, որ իրականում սա շրջափուլ է և նշված տիպերից որևէ մեկին լիարժեք պատկանող մարդ բնության մեջ գոյություն չունի: Սակայն ուսումնական գործընթացը պետք է կազմակերպել հնարավորինս հաշվի առնելով ուսուցանվողի պահանջները և բնությունից նրան տրված ուսումնառության ոճը:

Այսպիսով, հիմնվելով դպրոցներում և բուհերում իրականացված հետազոտությունների վրա կարելի է եզրակացնել, որ ուսուցման նախագծային մեթոդն առավելագույնս համապատասխանում է աշակերտների և ուսանողների ուսումնառության ժամանակակից պահանջներին:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. David Kolb: «Learning Styles» 1984, Prentice-Hall, Inc., Englewood Cliffs. New Jersey 07632.
2. Е.С.Полат: «Новые педагогические и информационные технологии в системе образования» М.: ACADEMIA, 2001. - 272 с.
3. <https://edugalaxy.intel.ru/?act=elements&courseid=0&CODE=course> Курс программы ИНТЕЛ «Обучение для будущего» из серии «Элементы»: Метод проектов. ИНТЕЛ, 2014.
4. <https://ggg.nairi.education/#560> և <https://ggg.nairi.education/#559> «Նաիրի» համընկերության պաշտոնական կայք, 2015

РЕЗЮМЕ

ПРОЕКТНЫЙ МЕТОД ОБУЧЕНИЯ КАК СРЕДСТВО ПОЛУЧЕНИЯ ОПТИМАЛЬНЫХ РЕЗУЛЬТАТОВ

А. И. САГРАДЯН, А. В. АЙВАЗЯН

Метод направлен на стимулирование самостоятельной деятельности школьников и студентов при решении проблем в области науки и техники с помощью различных навыков умений, знаний, и методов. В статье представлены возможности метода в качестве способа получения осязаемых результатов в процессе обучения. Метод отличается от классических методов, направляя студентов на самостоятельное целеполагание, позволяет анализировать приобретение необходимой информации для этой цели, и в результате теоретической, методологической и эмпирической деятельности дает соответствующие предложения для решения задач в соответствии с этой резолюцией.

SUMMARY

METHOD PROJECTS OF TEACHING AS A TOOL TO OBTAIN TANGIBLE RESULTS

A. I. SAHRADYAN, H. V. AYVAZYAN

The method aims to encourage independent work of students and students to solve problems in the field of science and technology through a variety of skills skills, knowledge and techniques. The paper presents the possibilities of the method as a way of obtaining tangible results in the learning process. The mentioned method differs from classic methods by guiding the pupils towards independent goal setting, brings to obtaining the necessary data to implement, analyse and solve the problem suggesting the necessary theoretical, methodical and experimental mean to come out with appropriate solution as a result.